

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

21.08.2017թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդյանը - մարզպետի տեղակալ
- Հ.Թադևոսյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ.Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ.Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ.Սայադյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Գ.Բաղդասարյանը, Մ.Սարգսյանը, Ա.Աղլոյանը, Վ.Դոխոյանը, Ս.Խեչումյանը, Ա. Բաղդասարյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Մանուկյանը - մարզպետի խորհրդական
- Ա.Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ.Էվինյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

- 1.Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին
/Ձեկ. Ն.Սարգսյան/
- 2.Համայնքներում կարող ուժերի համախմբման շուրջ կատարված աշխատանքների մասին
/Ձեկ. Ա.Դարբինյան
Տ.Բաղդյան
Հ.Թադևոսյան /
- 3.Ձեռնարկ, վիրավոր ազատամարտիկների, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ գրենական պիտույքներ տրամադրելու մասին
/Ա. Նալբանդյան/
- 4.Նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին
/Ձեկ. Մ.Սայադյան/
- 5.Հանրակրթական դպրոցներում կատարվող շինարարական աշխատանքների մասին
/Ձեկ. Ա.Ջանազյան/
6. Համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման մասին
/Ձեկ.Հ.Պապոյան/
7. Մարզում գյուղատնտեսական աշխատանքների կատարման ընթացքի մասին
/Ձեկ.Գ. Հակոբյան/

Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Դարբինյանին, Հ.Թադևոսյանին, Տ.Քաղոյանին`

Մինչև սեպտեմբերի 1-ը ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ համայնքներում կարող ուժերի համախմբման նպատակով կատարած ուսումնասիրությունների և գույքագրման արդյունքների վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին`

Ակտիվ մասնակցություն ցուցաբերել մարզի ուսումնական հաստատություններում սեպտեմբերի 1-ի` «Գիտելիքի օրվա» միջոցառումների անցկացմանը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Սարգսյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ս. Խեչումյանին`

Համատեղ ուսումնասիրություններ կատարել մարզում առկա, ինչպես նաև մարզպետարան դիմած սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում (առաջին հերթին զոհված, վիրավոր ազատամարտիկների) երեխաներին գրենական պիտույքներով ապահովելու հարցի լուծման նպատակով:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Դիմել Լոռու մարզի համայնքների ղեկավարներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ դպրոցահասակ, սոցիալապես անապահով աշակերտներին անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու նպատակով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ